15 Սիրտ իմ, ընդէ՞ր տրրտում ես,
Ուրախ լե՛ր, ընդէ՞ր տրրտում ես։

Աշխարհս ամենայն ունայն է,
Թափուր եւ դատարկ միայն է,
Զարութիւն ի քենէ հանէ.
20 Սիրտ իմ, վասն է՞ր տրրտում ես,
Ուրախ լե՛ր, ընդէ՞ր տրրտում ես։

Բազ եւ նուազ արարած
Որ կողոպտէ զմարդն ի կենաց,
Պարտիս ապաւինիլ յԱստուած.
25 Սիրտ իմ, վասն է՞ր տրրտում ես,
Ուրախ լե՛ր, ընդէ՞ր տրրտում ես։

Ի քեզ յուսանամ Տիրածին,
Մարիամ սուրբ Աստուածածին,
Երկրրպագեմ քո Միածնին.
30 Սիրտ իմ, վասն է՞ր տրրտում ես.
Ուրախ լե՛ր, ընդէ՞ր տրտում ես։

Առ յինէն ի քեզ զայս դրրուատ,
Մի լինի բրնաւ յուսահատ,
Զաքարիաս երգէ զայս դրրուատ.
35 Սիրտ իմ, վասն է՞ր տրտում ես,
Ուրախ լե՛ր, ընդէ՞ր տրրտում ես։

---

17. B. էբրէ- Բ. գոռ. Աշարհս։ — 18. B. Թափոր։ — 19. B. ի քէն։
22—26. C. ընդ այս գոռը։ — 24. B. Աստուած։
29. B. երկիր պագանեմ Միածնին։ C. Միածին։
32. B. յինէն զայս խրատ։ — 34. B. Զաքարեայ խրատ։